խարհի բոլոր կողմերում, որտեղ անծանօթ չէր Զալալը իւր քաջութիւններով, բարի գործերով և եղերական վախճանով։ Հասկանալի է, որ մի ձի չէր կարող այսքան երկար ապրել, բայց նորա սերունդը յաջորդաբար նոյն անունով կը կոչուէր. և Զօջանց տան վէպում յիշւում է, որ ժառանգ դիւցազնի ձին իւր հօր ձիու սերունդից էր։

Մի նորութիւն ևս ունի այս փոփոխակը, այն է Բապը Ֆրէնկի (№ 15, Թ, § 317—337)։ Այս անունը «Պապէ, Պապը Ֆրէնկէ աղջիկ» կայ և մի հէքեաթում [1]. այլ և ունի Զօջանց տան № 1—13 փոփոխակներից մինն ևս «Բարա Ֆրէնկի և Ֆրէնկի Պապ» (№ 10, էջ 424, 430), որին ինչպէս և Աստղիկ Պարոնին, Սամու շահին և Սուլթան Մուրադին դիմում է Մսրայ մելիքը և օգնութիւն խնդրում։ Զօջանց վէպը ճիշտ պահել է Ֆրանկի այսինքն Եւրոպայի պապի մասին գաղափարը, որ խաչակրութեան առաջնորդը և հոգին է եղել. իսկ Եւրոպայի ժողովուրդներից, մանաւանդ առաջին խաչակրութեան յատկապէս ֆրանկներն են մասնակցել, ուստի և արևելքում, ֆրանկ, Ֆրանկստան Եւրոպա, ֆրանսացի և կաթոլիկ է նշանակում։ Պարզ է որ այստեղ խօսքը հռոմէական կաթոլիկ եկեղեցու պետ պապի մասին է. թէ որքան պատմական հող ունի յատկապէս № 15-ի միջնադէպը դժուար է պնդել, դուցէ այստեղ Մհէրի գործը անցել է Դաւթին,—մեր Զօջանց փոփոխակներում շատ անգամ մէկի գծերը միւսին են անցնում,—իսկ Մհէրը նոյնացել է մեր Մլեհի հետ [2]։ Ապա յայտնի է մեր Կիլիկեան իշխանների և թագաւորների ջերմ մասնակցութիւնը և յարաբերութիւնը խաչակրութեան հետ։ Խաչակրութեան ազդեցութիւնը յատկապէս երևում է և պարոն տիտղոսից, որ կրում է այստեղ և այլ ուրիշ Աստղիկը (№ 2, 7), որ այլապէս կոչւում է Աստղիկ Երզնկացի (№ 3, Բ)։ Պարոն կոչւում են և № 14-ի մի քանի դև—դիւցազները, որ բռնել է մեր իշխան կամ նախարար անուան տեղ։ Այս են հաստատում Դաւթի աջ թևի մսէ խաչը, կրած ս. նշանը, «խաչ պատրաստին», կամ փեսրապին (խաչ փարաղ=խաչապաշտ) ելն։ Յայտնի է որ խաչակիրները խաչ էին կրում իրենց աջ թևին, որից և ծագել է այդ անունը։ Խաչը իւր պաշտամունքով մեզնում սկսուելով է. դարից՝ տարածուել է խաչակրութեան ժամանակ դանազան մասունքներով, որ ունի և վէպը (№ 1, Դ, էջ 13). ցարդ շատ «օջաղ» —տներ ևս ունին Կարմիր Աւետարան, Նարեկ և այլ սրբութիւններ։ Հետաքրքրական է այս կողմից այն պարագան, որ մեր վիպասաց-

---

1. Էմինեան Ազգ. Ժողովածու Դ. § 6 «Լուսաւոր մորթ». էջ 55։

2. Զօջանց տան պատմականը [Արարատ 1908. Յունուար, էջ 113—114 (39—40)]։